838 Քանանից զատ կա մի քաղաք,

1. Քանանից զատ կա մի քաղաք,
Որտեղ սուրբերն են բնակվում,
Բյուր-բյուրավոր հրեշտակներ
Տեր Աստծուն են փառաբանում:
Երազում ենք մենք էլ տեսնել
Փառաց տունը այն երկնային,
Լինենք ընտրյալ սուրբեր՝ ներկա
Տեր Հիսուսի հարսանիքին:
Երուսաղեմ երազներիս,
Դու լուսափայլ օրրան հույսիս,
Սպասում ենք մենք Տիրոջ այցին,
Որ հասցնի սուրբ հանգրվանին:

2. Դուք էլ, մարդի՛կ, Աստծո որդիք,
Շտապե՛ք տապան Տեր Հիսուսի,
Սուրբ հանդերձներով զարդարվեք,
Մաքրեք աղտերը ձեր սրտերի:
Կանչե՛ք Փրկչին, Թագավորին՝
Գա, մեզ տանի երկինքը վեր,
Փարվենք Հայր Աստծո կրծքին,
Փառք տանք Գառին, օվսաննանե՛ր:
Արի՛, Արքա՛, արի՛, մեր Տե՛ր,
Հոգով լցված՝ կանչում ենք Քեզ,
Հափշտակի՛ր դեպ տունը նոր՝
Հրաշքների Երուսաղեմ: